ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ IEA (INTERNATIONAL ASSOCIATION FOR THE EVALUATION OF EDUCATIONAL ACHIEVMENT) ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ TIMSS 2027Թ.՝ «ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ» ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. **Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիա (I.E.A.) - հիմնադրամի** Նիդերլանդների քարտուղարությունը, որի գրասենյակը գտնվում է Նիդերլանդների Ամստերդամ քաղաքի Կայզերգրախտ 311 1016 EE հասցեում (Հաագայի առևտրի պալատ # 4115887 , ԱԱՀ չի գանձվում)՝ ի դեմս գործադիր տնօրեն դոկտ. Դիրք Հասթեդտի, այսուհետ՝ Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիա (IEA)

և

2. **Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը** (գործադիր իշխանության հանրապետական մարմին)՝ ի դեմս նախարար Ժաննա Անդրեասյանի (հասցե՝ 0010 ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2) այսուհետ՝ Մասնակից,

Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիան (I.E.A.) և Մասնակիցը միասին՝ Կողմեր,

ՀԻՄՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ, ՈՐ՝

Ա. Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիան (IEA) շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որն իրականացնում է կրթական ձեռքբերումների և կրթության այլ հայեցակետերի լայնամասշտաբ

համեմատական ուսումնասիրություններ՝ կրթական բոլոր համակարգերի ներսում և դրանց միջև իրականացվող քաղաքականության և պրակտիկայի ազդեցության վերաբերյալ խորքային պատկերացում կազմելու նպատակով,

Բ. Մաթեմատիկայի և բնագիտության միջազգային միտումների հետազոտությունը (ԹԻՄՍՍ) 2027 Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիայի (IEA) նախաձեռնությամբ իրականացվող և վերջինիս սեփական միջոցներով և մասնակիցների ներդրումներով ֆինանսավորվող համատեղ ուսումնասիրություն է (այսուհետ՝ ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրություն),

Գ) ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրությունն իրականացվում է Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիայի (IEA) պատասխանատվության ներքո, որի ընթացքում մասնակից երկրները միասնական ջանքեր են գործադրում ընդհանուր նպատակի հասնելու, այն է՝ կրթական պրակտիկայի վերաբերյալ բարձրորակ, միջազգային մակարդակով համադրելի տվյալներ հավաքագրելու նպատակով,

Դ. Մասնակիցը ցանկանում է մասնակցել ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրությանը: Հետևաբար Կողմերը ցանկանում են սահմանել սույն ԹԻՄՍՍ 2027-ին մասնակցության պայմանագրին (այսուհետ՝ Պայմանագիր) մասնակցելու հատուկ կարգն ու պայմանները,

ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ.

ՀՈԴՎԱԾ 1. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

1.1. Սույն համաձայնագրով սահմանված կարգով և պայմաններով Կողմերը համաձայնում են, որ Մասնակիցը մասնակցի ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրությանը, իսկ Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիան (IEA) սույնով Մասնակցին իրավունք է տալիս Ուժի մեջ մտնելու ամսաթվի դրությամբ սույն համաձայնագրի 2-րդ հոդվածով սահմանված կարգով մասնակցելու ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրությանը (այսուհետ՝

Մասնակցության իրավունք), որը սույնով ընդունելի է Մասնակցի կողմից:

1.2. Մասնակիցը հասկանում և ընդունում է, որ քանի որ Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիայի (IEA) կողմից կատարված ֆինանսական ներդրումները, որպես այդպիսին, բավարար չեն ամբողջ ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրությունը ֆինանսավորելու համար, մասնակից բոլոր երկրները (այդ թվում՝ Մասնակիցը) 1.1 հոդվածով տրամադրված Մասնակցության իրավունքի փոխարեն պետք է կատարեն սույն համաձայնագրի 3-րդ հոդվածով սահմանված ֆինանսական ներդրում (մասնակցության վճար):

1.3. Կողմերն ընդունում են, որ Մասնակցի մասնակցությունը ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրությանը Մասնակցին հնարավորություն կտա զգալի օգուտ քաղելու ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրության շրջանակներում Կողմերի համագործակցության արդյունքում ձեռք բերված կարևոր տվյալների աղբյուրից, ինչը կարող է տրամադրել օգտակար և համեմատական տեղեկատվություն:

1.4. Մասնակիցը մեկ առաջատար մասնագետի՝ հայտնի որպես Ազգային հետազոտությունների համակարգող (ԱՀՀ), հանձնարարում է ներկայացնել Մասնակցին: ԱՀՀ-ն ուսումնասիրության ընթացքում հանդես է գալիս որպես աշխատանքի հետ կապված հաղորդակցության համակարգող:

1.5. Կողմերը սույնով համաձայնում են, որ այնքանով, որքանով Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիան (IEA) և վերոնշյալ ԱՀՀ-ն անձնական տվյալները մշակում են ԹԻՄՍՍ 2027-ի, IEA-ի և վերոնշյալ ԱՀՀ-ի նպատակներով, նրանք տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգի 26-րդ հոդվածի իմաստով [Կանոնակարգ (ԵՄ) 2016/679] համարվում են ընդհանուր հսկիչներ:

1.6. Մասնակիցն ընդունում և հայտնում է, որ նշանակված ԱՀՀ-ն հավատարիմ է ընդհանուր հսկողության մոդելին, ինչպես սահմանված է սույն հոդվածում և վերոնշյալ 1.5 հոդվածում: Մասնակիցը նաև հայտնում է, որ նշանակված ԱՀՀ-ն տրամադրում է ողջամիտ ամբողջ աջակցությունը և

իրականացնում է Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիայի (IEA) տվյալների գաղտնիության միջազգային չափորոշիչների համար անհրաժեշտ բոլոր պայմանագրերը, ներառյալ (սակայն չսահմանափակվելով) ստորև՝ 1.7 հոդվածով սահմանված ընդհանուր հսկողության համաձայնագրով:

1.7. Կողմերը սույնով համաձայնում են, որ ընդհանուր հսկողության կարգը սահմանելու նպատակով Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիայի (IEA) և ԱՀՀ-ի միջև ստորագրվում է ընդհանուր հսկողության համաձայնագիր:

ՀՈԴՎԱԾ 2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՒԼԵՐԸ

2.1. Մասնակիցը սույնով համաձայնում է ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրության ամբողջ ժամանակահատվածում համագործակցել Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիայի (IEA) հետ: Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիայի (IEA) կողմից իրականացվելիք աշխատանքի հստակ շրջանակը, որտեղ Մասնակիցը համաձայնում է միասնական համագործակցությանը, սահմանված է ստորև.

<u>Առաջին փուլ (1 տարի). Մշակում</u>

- ԹԻՄՍՍ հիմունքների և մասնագրերի վերանայում և վերջնականացում:
- Նոր տարրերի մշակում, ինչպես նաև այդ տարրերի գնահատման ընթացակարգերի մշակում և ոլորտային փորձարկումների իրականացում:
- Հարցաթերթիկների վերանայում և պարզեցում (ուսանողների, ծնողների, ուսուցիչների և դպրոցների համար) և նրանց նախապատրաստում ոլորտային փորձարկումներին:
- Փաստաթղթերի թարգմանությունների հաստատման ընթացակարգերի մշակում:

- Յուրաքանչյուր մասնակից երկրի համար նմուշառման ծրագրերի մշակում և յուրաքանչյուր երկրում նմուշառման ընթացակարգերի մշտադիտարկում:

Երկրորդ փուլ (1 տարի). Ոլորտային փորձարկում

- Ոլորտային փորձարկումների համար գործառնությունների և տվյալների հավաքագրման ձեռնարկների մշակում, ինչպես նաև վերապատրաստումներ ոլորտային փորձարկումների արդյունքում ստացված տվյալների հավաքագրման և գնահատման ընթացակարգերի ոլորտում:

- Ոլորտային փորձարկումների համար նախատեսված գործիքների թարգմանությունների վավերացում:

- Ոլորտային փորձարկումների արդյունքում ստացված տվյալների վերլուծություն:

- Հարցումների վերաբերյալ փաստաթղթերի վերջնական տարբերակների կազմում:

Երրորդ փուլ (1 տարի). Հիմնական տվյալների հավաքագրում

- Շահագործման և տվյալների հավաքագրման ձեռնարկների մշակում և գնահատում իրականացնելու նպատակով երկրների վերապատրաստում տվյալների հավաքագրման և գնահատման ընթացակարգերի ոլորտում:

- Տվյալների հավաքագրման հիմնական գործիքների թարգմանության վավերացում:

- Տվյալների հավաքագրման ընթացքում ոլորտային փորձարկումների որակի ապահովում և արդյունքների փաստաթղթավորում:

- Տվյալների միջազգային շտեմարանի կառուցում, ազգային տվյալների հավաքակազմի ճշգրտության և համադրելիության ստուգում և վերստուգում:

- Տվյալների տարատեսակ վերլուծություններ, այդ թվում՝ տարրերի

վերլուծություն, տարրերի տարբերակիչ գործառույթ, մասշտաբավորում, նմուշառման սխալի գնահատում և հաշվետվություններ կազմելու նպատակով փոփոխականների դուրսբերում:

Չորրորդ փուլ (1.5 տարի). Հաշվետվությունների կազմում

- Մասնակից երկրների կողմից վերանայման ենթակա հաշվետու աղյուսակների կազմում:
- ԹԻՄՍՍ հանրագիտարանի կազմում և հրատարակում:
- ԹԻՄՍՍ միջազգային հաշվետվությունների կազմում և հրատարակում:
- Մանրամասն փաստաթղթավորված տվյալների շտեմարանի և կից ԹԻՄՍՍ օգտագործողի ձեռնարկի ստեղծում:
- ԹԻՄՍՍ 2027 տվյալների շտեմարանի կիրառման նպատակով վերապատրաստման սեմինարների անցկացում:
- Մասնակցություն ԱՀՀ-ի կողմից անցկացվող հանդիպումներին (ուսումնասիրության ընթացքում հանդիպումներն անցկացվում են տարեկան երկու անգամ):

Ուսումնասիրությունների հետ կապված աշխատանքների ավարտից հետո՝

- ԹԻՄՍՍ տեխնիկական հաշվետվության ստեղծում և հրատարակում:
- Մանրամասն փաստաթղթավորված տվյալների շտեմարանի և կից ԹԻՄՍՍ օգտագործողի ձեռնարկի ստեղծում:
- ԹԻՄՍՍ 2027 տվյալների շտեմարանի օգտագործման նպատակով վերապատրաստման սեմինարների անցկացում:

2.2. ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրությունների շրջանակներում ուսումնասիրությանը մասնակից անձը պատասխանատու է հետևյալ տարրերի համար.

- Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիային

(IEA) տրամադրել ուսումնասիրությունն իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկատվություն՝ ըստ վերոնշյալ 2.1 կետում սահմանված ուսումնասիրությունների ժամանակացույցի,

- մասնակցել ուսումնասիրությունների հետ կապված ինչպես առցանց, այնպես էլ տեղում իրականացվող հանդիպումներին և վերապատրաստումներին,

- օժանդակել ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրությունների նախապատրաստմանը, մշակմանը և իրականացմանն այնքան ժամանակ, քանի դեռ Մասնակցի ներդրումն անհրաժեշտ է, քանի որ ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրությունը համարվում է մասնակից երկրների կողմից գործադրվող միասնական ջանք՝ ընդհանուր նպատակների հասնելու համար,

- ընդունել սույն համաձայնագրին համապատասխան իրականացված ուսումնասիրության արդյունքները և ժամանակին կատարել մասնակցության վճարները: Վճարումը չկատարելու դեպքում մասնակցության չմարված վճարների համար կիրառելի է պարտքերի դեմ ուղղված միջոցառումների վերաբերյալ Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիայի (IEA) քաղաքականությունը, որը հասանելի է Մասնակցի պահանջի հիման վրա:

ՀՈԴՎԱԾ 3. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԸ

3.1. Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիայի (IEA) կողմից 1.1 հոդվածում սահմանված Մասնակցության իրավունքի համաձայն՝ Մասնակիցը սույնով համաձայնում է ֆինանսական օժանդակություն տրամադրել ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրության նպատակով՝ ներքոհիշյալ 3.2 հոդվածով սահմանված մասնակցության վճարը Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիային (IEA) փոխանցելու միջոցով:

3.2. Չորրորդ տարվա համար ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրության համար կիրառելի մասնակցության հիմնական վճարը 365.000 ՄԱՄ է (Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիայի (IEA) միջազգային արժութային միավոր), որը կազմում է 182.500 ԱՄՆ դոլար և 182.500 եվրո, որի

հաշիվ ապրանքագիրը կազմվում է հետևյալ կերպ.

Տարի	%	ԱՄՆ դոլար	Եվրո
2025	30%	54.750	54.750
2026	30%	54.750	54.750
2027	25%	45.625	45.625
2028	15%	27.375	27.375
Ընդամենը	100%	182.500	182.500

Մասնակցության հիմնական վճարը կարող է կատարվել միայն եվրոյով (1-ին տարբերակ), միայն ԱՄՆ դոլարով (2-րդ տարբերակ) կամ հավասարապես վճարվել եվրոյով և դոլարով (3-րդ տարբերակ):

Մասնակիցը պետք է ընտրի հետևյալ տարբերակներից որևէ մեկը՝ ընտրելով ստորև ներկայացված համապատասխան վանդակը՝

☒ Տարբերակ 1. Մասնակցության հիմնական վճարը միայն եվրոյով

☐ Տարբերակ 2. Մասնակցության հիմնական վճարը միայն ԱՄՆ դոլարով

☐ Տարբերակ 3. Մասնակցության հիմնական վճարը եվրոյով և ԱՄՆ դոլարով

Եթե Մասնակիցն ընտրում է 1-ին կամ 2-րդ տարբերակը, ապա վճարներն ավտոմատ կերպով փոխարկվում են հաշիվ-ապրանքագիրը ներկայացնելու ամսաթվին:

Փոխարժեքը, որն օգտագործվում է ԱՄՆ դոլարի կամ եվրոյի արժեքը սահմանելու նպատակով (տարբերակ 1 և 2), սահմանվում է Եվրոպական կենտրոնական բանկի հիման վրա: (https://www.ecb.europa.eu/stats/policy_and_exchange_rates/euro_reference_exchange_rates/html/index.en.html)

3.3. Մասնակիցը կարող է ստանալ 5% զեղչ այն դեպքում, եթե վերջինս չորս տարվա համար նախատեսված ամբողջ վճարը կատարում է առաջին տարվա ընթացքում (2025 թվականին):

3.4. Մասնակցության հիմնական վճարը ներառում է ստանդարտ նմուշի ծածկումը (նվազագույն նմուշի առավելագույնը 150%-ի չափով, ինչը կազմում է առավելագույնը 225 դպրոց կամ 10,000 ուսանող՝ կախված այն բանից, թե որն է ավելի բարձր), որն անհրաժեշտ է մասնակից ուսումնական համակարգի մակարդակով հուսալի գնահատման և փաստաթղթերի մինչև երկու լեզվով տարբերակներ ունենալու համար (այսուհետ նաև՝ Ստանդարտ նմուշ):

3.5. Եթե Մասնակիցը ցանկանում է ընդլայնել Ստանդարտ նմուշը փաստաթղթերի լեզվական տարբերակների տեսանկյունից՝ ի հավելումն 3.4 հոդվածում նշված մասնագրերի, որևէ գործողություն ձեռնարկելուց առաջ Մասնակցից պահանջվում է ներկայացնել համապատասխան ստորագրությամբ փոփոխությունը: Նման դեպքում յուրաքանչյուր լրացուցիչ լեզվի համար նախատեսվում է մասնակցության հիմնական վճարի մինչև առավելագույնը 10%-ի չափով լրացուցիչ վճար:

3.6. Եթե Մասնակիցը ցանկանում է ընդլայնել Ստանդարտ նմուշը մասնակից դպրոցների և (կամ) ուսանողների մասով՝ ի հավելումն 3.4 հոդվածում նշված մասնագրերի, ստանդարտ կարգավորումներից դուրս որևէ գործողություն ձեռնարկելուց առաջ Մասնակցից պահանջվում է ներկայացնել համապատասխան ստորագրությամբ փոփոխությունը: Նմուշը չափից շատ ընդլայնելու դեպքում նախատեսվում է մասնակցության հիմնական վճարի լրացուցիչ 10%-ը (չափից շատ նմուշառման վճար)՝ նվազագույն նմուշի 150%-ից բարձր յուրաքանչյուր 20%-ի համար, որը կազմում է 225 դպրոց կամ 10,000 ուսանող՝ կախված այն բանից, թե որն է ավելի բարձր:

3.7. Մասնակցության հիմնական վճարն ընդգրկում է միայն թվային գնահատումը, սակայն չի ընդգրկում թղթային գնահատման բաղադրիչը:

3.8. Մասնակցության հիմնական վճարն ընդգրկում է միայն թվային գնահատումը, սակայն չի ընդգրկում ԹԻՄՍՍ 2027-ի կամընտրական առաձգականության մոդուլը: Եթե Մասնակիցը ցանկանում է մասնակցել ԹԻՄՍՍ

2027-ի առաձգականության մոդուլին, ապա որևէ գործողություն ձեռնարկելուց առաջ հնարավորության դեպքում Մասնակցից պահանջվում է ներկայացնել լրացումը կամ փոփոխությունը՝ համապատասխան ստորագրությամբ: Առաձգականության մոդուլի համար նախատեսված վճարը կկազմի 120,000 ՄԱՄ: ԹԻՄՍՍ 2027-ի առաձգականության մոդուլը կախված է մասնակից երկրների նվազագույն քանակից: Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիան (IEA) իրավունք ունի չեղարկելու ԹԻՄՍՍ 2027-ի առաձգականության մոդուլը՝ առանց որևէ պատասխանատվություն կրելու մասնակից երկրների ոչ բավարար քանակի դեպքում:

3.9. Ուղենշային մասնակցությունը թույլատրելի է այն դեպքում, երբ Մասնակիցն այնպիսի երկրի ենթասուբյեկտ է, որն արդեն մասնակցում է տվյալ ուսումնասիրությանը, կամ մասնակից չհանդիսացող երկրի երկրորդ ենթասուբյեկտն է: Որպեսզի ենթասուբյեկտը միանա որպես ուղենշային մասնակից, այդ երկրից պետք է լինի մեկ սուբյեկտ, որն արդեն մասնակցում է որպես լիիրավ մասնակից և աջակցում է մասնակցության հիմնական վճարի հարցում: Ուղենշային մասնակցության դեպքում որևէ գործողություն ձեռնարկելուց առաջ անհրաժեշտ է ստորագրել մասնակցության առանձին պայմանագիր:

3.10. Ուսումնասիրությանն արդեն մասնակցող երկրի դեպքում ենթասուբյեկտի ուղենշային մասնակցության համար ենթասուբյեկտը պետք է պարզ սահմանված և հստակ նկարագրված լինի: Արդեն մասնակցող երկրների ենթասուբյեկտների համար նախատեսված մասնակցության վճարը կազմում է մասնակցության հիմնական վճարի 20%-ը՝ սահմանված վերոնշյալ 3.2 հոդվածում:

3.11. Ոչ մասնակից երկրի ենթասուբյեկտի ուղենշային մասնակցության դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ որևէ այլ ենթասուբյեկտ չի մասնակցում, կիրառելի է 3.2 հոդվածով սահմանված մասնակցության ամբողջ վճարը:

3.12. Ուղենշային բոլոր մասնակիցները ծանուցվում են միջազգային

հաշվետվության առանձին աղյուսակում:

3.13. 3.5 և 3.6 հոդվածներին համապատասխան՝ մասնակցության ամբողջ վճարը ներառում է ԹԻՄՍՍ 2027 ամբողջ ուսումնասիրության ամբողջ ժամանակահատվածը:

3.14. Վճարումն ուշ իրականացնելու դեպքում Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիան (IEA) իրավունք ունի գանձելու վճարման ենթակա տարեկան մասնակցության վճարի՝ մեկ տարվա կտրվածքով 3% տոկոսադրույքը:

3.15. Ցանկության դեպքում մասնակցության հիմնական վճարը (այսուհետ նաև՝ Մասնակցության տարեկան վճար) կարող է կատարվել նաև տարեկան մասնաբաժիններով, ինչպես նաև այն բանից հետո, երբ Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիան (IEA) Մասնակցի պահանջով կտա իր գրավոր համաձայնությունը:

3.16. Մասնակիցը սույնով համաձայնում է կատարել մասնակցության վճարը (կամ անհրաժեշտության դեպքում՝ Մասնակցության տարեկան վճարը) հաշիվ-ապրանքագիրը ներկայացնելու ամսաթվից սկսած՝ 30 օրվա ընթացքում անվճար.

ԿՐԹԱԿԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ (IEA)- ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆԸ

Բանկ՝ ԷՅ-ԲԻ-ԷՆ-ԱՄՐՈ,

SWIFT/BIC ծածկագիրը՝ ABNANL2A

դոլարային հաշիվ՝ 48.19.62.069 (IBAN-SEPA: NL52ABNA0481962069)

եվրոյի հաշիվ՝ # 48.19.61.968 (IBAN-SEPA: NL63ABNA0481961968)

ՀՈԴՎԱԾ 4. ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

4.1. Կողմերը համաձայնում և ընդունում են, որ ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրությունն արդյունավետ և բարեհաջող իրականացնելու համար միանգամայն կարևոր է, որ ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրությունից բխող մտավոր սեփականության իրավունքները և աշխատանքի արդյունքների հետ կապված սեփականության իրավունքները կենտրոնացված լինեն Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիայի (IEA) վրա: Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիան (IEA) իր հերթին մասնակից բոլոր երկրներին տրամադրում է հավաստագիր՝ մտավոր սեփականությունը և աշխատանքի արդյունքները ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրությանն իրենց տրամադրած օժանդակության շրջանակներում ըստ անհրաժեշտության օգտագործելու նպատակով:

4.2. Կողմերը հետևաբար սույնով համաձայնում են, որ ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրության արդյունքների նկատմամբ մտավոր սեփականության ընթացիկ և (կամ) հետագա բոլոր իրավունքները (ներառյալ, սակայն չսահմանափակվելով հեղինակային իրավունքներով, դիզայնի նկատմամբ իրավունքներով, տվյալների շտեմարանների նկատմամբ իրավունքներով, պատկերանշաններով, ապրանքային նշաններով, ապրանքի անվանումներով, տիրույթի անվանումներով, արտոնագրային իրավունքներով, հայտնագործություններով և աշխարհի ցանկացած մասում նմանատիպ այլ իրավունքներով, այդ թվում՝ նոու-հաու այն դեպքում, երբ այդ իրավունքները ձեռք են բերվում կամ ընդլայնվում են այդ իրավունքների և դիմումների գրանցման և այդպիսի գրանցումների համար դիմում ներկայացնելու իրավունքների միջոցով), այսուհետ նաև՝ Մտավոր սեփականության իրավունքները, անմիջապես ծագելուն պես պետք է դառնան Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիայի (IEA) բացառիկ սեփականությունը:

4.3. Կողմերը համաձայնում և ընդունում են, որ ԹԻՄՍՍ 2027

ուսումնասիրության արդյունքների հետ կապված Մտավոր սեփականության իրավունքները ներառում են, սակայն չեն սահմանափակվում Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիայի (IEA) գնահատման ներկայիս և հետագա գործիքների և ուսումնասիրությունների, գնահատման ընթացակարգերի, առաքման համակարգչային համակարգերի, տվյալների շտեմարաններ պարունակող պատվիրված ծրագրաշարերի, փորձնական սարքավորումների, ոլորտային փորձարկումների, տվյալների հավաքագրման ձեռնարկների, միջազգային հաշվետվությունների, այդ թվում՝ դրանց բոլոր տեղային թարգմանությունների նկատմամբ (համատեղ կամ առանձին) հեղինակային իրավունքներով, ինչպես նաև թե՛ ԹԻՄՍՍ 2027 տվյալների շտեմարանի, թե՛ Մասնակցի կողմից տրամադրվելիք տեղի ազգային տվյալների հավաքակազմերի նկատմամբ տվյալների շտեմարանի հետ կապված բոլոր իրավունքներով և (կամ) հեղինակային իրավունքներով (դրա հիմքում ընկած աշխատանքներն այսուհետ՝ ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրության արդյունքներ):

4.4. 4-րդ հոդվածն ամբողջությամբ կիրառելու նպատակով, այնքանով, որքանով անհրաժեշտ է, Մասնակիցը սույնով (անհրաժեշտության դեպքում՝ նախապես) Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիային (IEA) է օտարում 1) ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրության արդյունքների նկատմամբ մտավոր սեփականության ներկայիս և հետագայում ձեռք բերվող բոլոր իրավունքները, ինչպես նաև Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիային (IEA) օտարում է 2) ներկայիս և հետագա արդյունքների նկատմամբ սեփականության բացառիկ իրավունքը, ներառյալ, սակայն չսահմանափակվելով ներպետական գնահատման բոլոր արդյունքների և դրանց հետ կապված տվյալների հավաքակազմերի նկատմամբ բացառիկ սեփականության իրավունքով, որոնց օտարումը սույնով ընդունվում է Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիայի (IEA) կողմից: Մասնակիցը շարունակում է օգտվել իրեն փոխանցված բոլոր իրավունքներից և աշխատանքի արդյունքներից, որոնք Մասնակցին

տրամադրվել են Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիայի (IEA) լիցենզիայի հիման վրա, ինչպես սահմանված է ներքոհիշյալ 5-րդ հոդվածով:

4.5. Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիայի (IEA) պահանջով մասնակիցը կատարում է համաձայնագրերը, փաստաթղթերը, ակտերը, հաստատումները և (կամ) ծանուցումները, ինչպես նաև սույն համաձայնագրով սահմանված կարգով կատարում է ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրության արդյունքների նկատմամբ Մտավոր սեփականության իրավունքների և սեփականության իրավունքների վերաբերյալ այն բոլոր ակտերը, որոնք կարող են անհրաժեշտ կամ ցանկալի լինել գործող օրենքի կամ դրանց փոխանցման կամ կատարելագործման ցանկացած իրավազորության շրջանակներում:

ՀՈԴՎԱԾ 5. ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

5.1. Կողմերը համաձայնում և ընդունում են, որ ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրությանն արդյունավետ մասնակցություն ունենալու նպատակով Մասնակիցը Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիայից (IEA) պահանջում է լիցենզիա՝ մտավոր սեփականության (ներկա և ապագա) իրավունքներից օգտվելու, ինչպես նաև ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրության արդյունքները (ներկայիս և հետագա) ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրության հետ կապված աշխատանքների շրջանակներում օգտագործելու, ձևափոխելու և (կամ) հարմարեցնելու իրավունքներից օգտվելու համար, ինչպես սահմանված է 2-րդ հոդվածում:

5.2. Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիան (IEA) սույնով Մասնակցին է տրամադրում ոչ բացառիկ, անփոխանցելի, հետ կանչվող լիցենզիա՝ սույն համաձայնագրի գործողության ամբողջ ընթացքի համար՝ մտավոր սեփականության (ներկայիս և հետագա) իրավունքներն օգտագործելու և ԹԻՄՍՍ ուսումնասիրության (ներկայիս և հետագա)

արդյունքներն օգտագործելու, փոփոխելու և (կամ) հարմարեցնելու նպատակով, իսկ սույն լիցենզիայի տրամադրումն ակնհայտորեն սահմանափակվում է դրա օգտագործմամբ ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրության շրջանակում իրականացվող, մասնակցությանն ուղղված գործողությունների շրջանակներում, ինչպես սահմանված է սույն համաձայնագրով:

5.3. Կողմերը համաձայնում և ընդունում են, որ 5.2 հոդվածով սահմանված լիցենզիայի տրամադրումը ներառում է Մասնակցի իրավունքը՝ օգտագործելու Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիայի (IEA) ԹԻՄՍՍ ապրանքային նշանները, որոնք գրանցված են եղել «Բենելյուքս» անվանմամբ (թիվ 005937214) և դրա հետ կապված միջազգային ապրանքային նշանները (այսուհետ նաև՝ ԹԻՄՍՍ ապրանքային նշաններ), որոնց օգտագործումն ակնհայտորեն սահմանափակված է օգտագործմամբ ԹԻՄՍՍ ուսումնասիրության ընթացքում Մասնակցի կողմից մասնակցությանն ուղղված իր գործունեության շրջանակներում, ինչպես սահմանված է սույն համաձայնագրով:

5.4. Մասնակիցն ակնհայտորեն լիազորված չէ դիմելու ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրության հետ կապված մտավոր սեփականության իրավունքների տրամադրման և (կամ) դրանց գրանցման համար (ներառյալ, սակայն չսահմանափակվելով ապրանքային նշանի կամ տիրույթի անվանման գրանցմամբ)՝ առանց Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիայի (IEA) նախնական գրավոր հաստատման:

5.5. Մասնակիցը տեղեկացված է, որ Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիան (IEA) Մտավոր սեփականության իրավունքների և աշխատանքի արդյունքների՝ երրորդ կողմերի կողմից կիրառման կապակցությամբ մշակել է մտավոր սեփականության խիստ քաղաքականություն: Բոլոր հրատարակումները և Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիայի (IEA) կողմից թողարկվող նյութերը, ինչպես նաև դրանց թարգմանությունները կազմվում են միայն ոչ առևտրային, կրթական և հետազոտական նպատակներով, իսկ սույն համաձայնագրի

շրջանակներից դուրս դրանց օգտագործումը ենթակա է Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիայի (IEA) նախնական գրավոր հաստատմանը:

5.6. Այն դեպքում, երբ նյութերի՝ տվյալ երկրի լեզվով արված թարգմանությունները երրորդ կողմի կողմից պահանջվում են վերոնշյալ 5.5 հոդվածին համապատասխան օգտագործելու համար, ապա որոշումն այն հարցի վերաբերյալ, թե արդյոք նյութերի՝ տվյալ երկրի լեզվով արված թարգմանությունը կարելի է ներկայացնել որևէ երրորդ կողմի, կայացնում է Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիան (IEA):

5.7. Եթե Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիայի (IEA) կողմից տրված հատուկ գրավոր թույլտվություն առկա չէ, Մասնակցին չի թույլատրվում տրամադրել լիցենզիա (ենթալիցենզիա) կամ մտավոր սեփականության իրավունքների լիցենզիան և (կամ) ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրության արդյունքները փոխանցել որևէ երրորդ կողմի: Եթե Մասնակիցը կառավարական մարմին կամ վարչություն, քվազի-վարչական կամ կանոնադրական մարմին է (այսուհետ՝ Պետական մարմին), ապա Մասնակցի կողմից Մտավոր սեփականության իրավունքների և (կամ) ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրության արդյունքների (կազմված, խմբագրված կամ որևէ այլ եղանակով) մատակարարումը, լիցենզավորումը (ենթալիցենզավորումը) կամ փոխանցումը կառավարական որևէ այլ մարմնի պետք է համարվի փոխանցում երրորդ կողմի և պետք է արգելված լինի, քանի դեռ առկա չէ Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիայի (IEA) պարզ գրավոր թույլտվությունը:

ՀՈԴՎԱԾ 6. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎԸ, ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

6.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Համաձայնագրի ստորագրման օրը (Կողմերի կողմից սույն համաձայնագիրն ստորագրելու օրը, սակայն, երբ ստորագրման ամսաթվերը տարբեր են, ապա վերջին Կողմի կողմից ստորագրելու օրը) և գործում է ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրության ամբողջ

ժամանակահատվածում, այն է՝ մինչև 2029 թվականի մարտի 31-ը: Այն դեպքում, երբ ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրությունը երկարաձգվում է 2029 թվականի մարտի 31-ից ավելի ուշ, սույն համաձայնագիրն ինքնաբերաբար երկարաձգվում է մեկ տարի ժամկետով, այն է՝ մինչև 2030 թվականի մարտի 31-ը կամ ավելի ուշ ժամկետով՝ կախված այն բանից, թե երբ է կնքվել ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրության վերաբերյալ համաձայնագիրը:

6.2. 6.1 հոդվածով սահմանված ժամկետի ընթացքում Կողմերից յուրաքանչյուրը, 6.3, 6.4 և 6.5 հոդվածներին համապատասխան, կարող է դադարեցնել սույն համաձայնագիրը: 6.5 հոդվածին համապատասխան սույն համաձայնագիրը դադարեցնելու դեպքում մասնակիցը պետք է գրավոր ներկայացնի դադարեցման հիմքերը և երկամսյա ծանուցման ժամկետ տրամադրի:

6.3. Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիան (IEA) կարող է անմիջապես դադարեցնել սույն համաձայնագիրը՝ առանց անհրաժեշտ որևէ ծանուցման ժամկետի, եթե 1) Մասնակիցը Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիայի (IEA) կողմից դրա համար անհրաժեշտ ժամկետը տրամադրելուց հետո չի կատարում սույն համաձայնագրով սահմանված իր պարտականությունները, կամ 2) Մասնակցի սնանկության կամ անվճարունակության վարույթների դեպքում: 1-ին կետով սահմանված կարգով պարտականությունները չկատարելու կամ 2-րդ կետով սահմանված սնանկության կամ անվճարունակության վարույթների դեպքում Մասնակցության ամբողջ վճարը ենթակա է վճարման, իսկ արդեն վճարված տարեկան Մասնակցության վճարը ենթակա չէ վերադարձի Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիայի (IEA) կողմից:

6.4. Մասնակիցը կարող է անմիջապես դադարեցնել սույն համաձայնագիրը՝ առանց ծանուցման ժամկետի անհրաժեշտության, եթե Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիան (IEA) 2-րդ հոդվածին համապատասխան չի կատարում իր պարտականությունները կոնկրետ աշխատանքի շրջանակներում, ընդ որում, Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիան (IEA) կամ հետազոտություններ իրականացնող հաստատությունն ակնհայտորեն պատասխանատու է դրա համար: Միայն նշված դեպքում Մասնակցության վճարը համամասնորեն վերադարձվում է Մասնակցին:

6.5. Մասնակցի կողմից ցանկացած այլ միջանկյալ դադարեցում՝ բացառությամբ 6.4-րդ հոդվածով սահմանված հիմքերի, առանց Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիայի (IEA) նախնական հաստատման չի թույլատրվում, որի հաստատումը չպետք է անհիմն կերպով

մերժվի: Եթե Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիան (IEA) համաձայնում է Մասնակցի կողմից միջանկյալ դադարեցմանը, ապա Մասնակցության ամբողջ վճարը (կամ Մասնակցության տարեկան բոլոր վճարները) սկզբունքորեն ենթակա են վճարման «Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիային (IEA): Այնուամենայնիվ, եթե առկա են բավարար հիմքեր Մասնակցության վճարը Մասնակցին (մասամբ) վերադարձնելու համար, ապա Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիան (IEA) կարող է որոշում կայացնել համապատասխանաբար վերադարձնելու այն իր հայեցողությամբ:

6.6. Սույն համաձայնագրի միջանկյալ դադարեցման դեպքում 5-րդ հոդվածով սահմանված լիցենզիայի տրամադրումն ինքնաբերաբար դադարում է՝ առանց Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիայի (IEA) կողմից դադարեցման մասին առանձին ծանուցման: Այդպիսի դադարեցման դեպքում Մասնակիցը Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիային (IEA) է ուղարկում ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրության արդյունքները և դրան կից սույն համաձայնագրի գործողության ընթացքում՝ նշված միջանկյալ դադարեցումից հետո 14 օրվա ընթացքում, իր կողմից կազմված նյութերը:

6.7. Կողմերից որևէ մեկը պատասխանատու չէ սույն համաձայնագրով սահմանված իրենց պարտականությունների ոչ պատշաճ կատարման համար, այնքանով, որքանով դա առաջացել է այն պայմաններում (ներառյալ, սակայն չսահմանափակվելով բնական աղետներով, առողջապահական ճգնաժամով, պատերազմով կամ ահաբեկչությամբ, անկարգություններով, աշխատանքային պայմաններով, կառավարության գործողություններով և համացանցի խափանմամբ), որոնք դուրս են տվյալ Կողմի ողջամիտ վերահսկողության շրջանակից:

ՀՈԴՎԱԾ 7. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԻ ՕՐԵՆՔՆԵՐԻՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻՆ

7.1. Մասնակիցը երաշխավորում է, որ ԹԻՄՍՍ 2027 ամբողջ ուսումնասիրության ընթացքում պահպանելու է իր մասնակցության և դրա հետ կապված օժանդակությանն առնչվող տեղի բոլոր օրենքները (ներառյալ, սակայն չսահմանափակվելով տվյալների պաշտպանության տեղի գործող օրենքներով):

7.2. Մասնակիցը Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիային (IEA) պաշտպանում և ազատում է երրորդ կողմի որևէ պահանջից, որը բխում է Մասնակցի՝ ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրությանն օժանդակող աշխատանքից:

7.3. Մասնակիցը երաշխավորում և հայտնում է, որ աշխատանքը պետք է կատարվի համապատասխան մարմինների կողմից ընդունված միջազգային և (կամ) տեղի գործող օրենքներին և կարգավորումներին համապատասխան, ներառյալ, սակայն չսահմանափակվելով խարդախության, կաշառակերության, Մտավոր սեփականության իրավունքների, շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, անվտանգության, աշխատանքային իրավունքների հարցերով:

7.4. Մասնակիցը պետք է պահպանի էթիկայի և գործարար պատասխանատվության ամենաբարձր չափորոշիչները: Մասնավորապես Մասնակիցը պետք է պահպանի վարքագծի էթիկական և պատասխանատվության ստանդարտների հետ կապված ազգային և միջազգային գործող բոլոր կանոնները, ներառյալ, սակայն չսահմանափակվելով այն կանոններով, որոնք առնչվում են մարդու իրավունքներին, շրջակա միջավայրի պաշտպանությանը, կայուն զարգացմանը, կաշառակերության և կոռուպցիայի դեմ պայքարին:

ՀՈԴՎԱԾ 8. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

8.1. Յուրաքանչյուր Կողմ պետք է պահպանի գաղտնի տեղեկատվությունը, որն իրեն բացահայտել կամ հայտնել են սույն համաձայնագրի կատարման շրջանակներում, այդ թվում՝ Մտավոր սեփականության իրավունքների և ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը, ներառյալ, սակայն չսահմանափակվելով գնահատման գործիքների և փորձարկման արդյունքների վերաբերյալ գաղտնի տեղեկատվությամբ (այսուհետ նաև՝ Գաղտնի տեղեկատվություն), որը մշտապես գաղտնի է (ներառյալ՝ սույն համաձայնագրի դադարեցումից հետո), և չպետք է օգտագործի Գաղտնի տեղեկատվությունը որևէ նպատակով՝ բացառությամբ սույն համաձայնագրով սահմանված պարտավորությունների կատարման:

8.2. Կողմերից յուրաքանչյուրը պետք է ձեռնպահ մնա Գաղտնի տեղեկատվությունը որևէ երրորդ կողմի բացահայտելուց՝ առանց մյուս կողմի գրավոր համաձայնության:

8.3. Երկու Կողմերը սույնով համաձայնում են, որ սույն հոդվածի դրույթները Կողմերի համար շարունակեն պարտադիր ուժ ունենալ՝ անկախ սույն համաձայնագրի ժամկետը լրանալուց կամ համաձայնագրի դադարեցումից:

ՀՈԴՎԱԾ 9. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

9.1. ԹԻՄՍՍ 2027-ի վերաբերյալ միջազգային հաշվետվությունը

կներկայացվի 2028 թվականի դեկտեմբերին, իսկ միջազգային տվյալների շտեմարանի վերջնական տարբերակը կթողարկվի 2029 թվականի մարտին:

9.2. Կողմերը համաձայնում և ընդունում են, որ ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրության բոլոր ազգային տվյալները պետք է ներառված լինեն ԹԻՄՍՍ 2027 միջազգային տվյալների շտեմարանում, որը պետք է կազմվի Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիայի (IEA) կողմից:

9.3. Կողմերը համաձայնում և ընդունում են, որ բոլոր տվյալները պետք է հասանելի լինեն ազգային հետազոտական կենտրոններին և ավելի լայն հետազոտական համայնքներին՝ Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիայի (IEA) տվյալների պահեստավորման համակարգի միջոցով:

9.4. Մասնակիցը սույնով հաստատում է, որ այն չպետք է երրորդ կողմերին ներկայացնի կամ հայտնի ԹԻՄՍՍ 2027 ուսումնասիրության որևէ տվյալ կամ ԹԻՄՍՍ 2027-ին առնչվող որևէ տեղեկատվություն դրանց թողարկման պաշտոնական ամսաթվերից առաջ, ինչպես հաղորդել կամ հայտնել է Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիան (IEA)՝ միջազգային հետազոտական կենտրոնների պարտականությունների և մասնակից երկրների ժամանակացույցի հիման վրա:

ՀՈԴՎԱԾ 10. ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՔԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒ ԴԱՏԱՐԱՆԸ

10.1. Համաձայնագիրը կարգավորվում է Նիդերլանդների օրենսդրությամբ: Հնարավորության դեպքում վեճերը կարգավորվում են խորհրդակցությունների միջոցով: Եթե դա չի հաջողվում, ապա Կողմերն իրենց վեճը ներկայացնում են Նիդերլանդների Ամստերդամ քաղաքի շրջանային դատարան:

ՀՈԴՎԱԾ 11. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11.1. Սույն համաձայնագրի բոլոր մասերի կամ որևէ մասի ցանկացած վերանայում, ձևափոխություն կամ փոփոխություն կարող է կատարվել փոխադարձ համաձայնությամբ, ինչպես նաև այդ մասին պետք է գրավոր հաստատվի, որը պետք է ստորագրվի երկու Կողմերի կողմից: Նշված վերանայումը, փոփոխումը կամ փոփոխությունը կազմում է սույն համաձայնագրի մի մասը: Այդպիսի վերանայումը, փոփոխումը կամ փոփոխությունն ուժի մեջ են մտնում Կողմերի սահմանած ամսաթվին:

11.2. Եթե սույն համաձայնագրի որևէ հոդված արգելված է օրենքով կամ դատարանի կողմից կարող է համարվել անօրինական, առոչինչ կամ անիրագործելի, այդպիսի հոդվածը, այնքանով, որքանով դա անհրաժեշտ է,

կարող է անջատվել սույն համաձայնագրից և համարվել ուժը կորցրած՝ հնարավորության դեպքում՝ առանց փոփոխելու սույն համաձայնագրի մնացած դրույթները, ընդ որում, այն որևէ կերպ չի կարող ազդեցություն ունենալ այլ հանգամանքների կամ սույն համաձայնագրի վավերականության կամ իրագործելիության վրա:

11.3. Կողմերը սույնով համաձայնում են, որ 4-րդ հոդվածը (մտավոր սեփականության իրավունքների և սեփականության իրավունքի վերաբերյալ) և 8-րդ հոդվածը (գաղտնիության վերաբերյալ) պետք է գործեն և ամբողջությամբ ուժի մեջ մնան նաև սույն համաձայնագրի դադարեցումից հետո:

Ի ՀԱՎԱՍՏՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալներս, համապատասխան Կողմերի կողմից պատշաճ լիազորված լինելով, ստորագրեցինք սույն համաձայնագիրը .....03/11/2025.....-ին (Ուժի մեջ մտնելու ամսաթիվ):

Ստորագրված Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիայի (IEA) հիմնադրամի անունից և

Հիմնադրամի համար՝ Նիդերլանդների քարտուղարություն

STICHTING IEA SECRETARIAAT NEDERLAND

դոկտ. Դիրք Հասթեդտ, գործադիր տնօրեն,

Մասնակցի անունից՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT OF THE REPUBLIC OF ARMENIA
02698732

Ժաննա Անդրեասյան, Նախարար